ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ա. Սարգսյան ____________

«01» 09 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզի Արզնիի Ս. Սարխոշևի անվան միջնակարգ դպրոց

Դասարան՝ IVբ

Դասղեկ՝ Ա. Գասպարյան

«2022-2023թ» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)
2022-2023թթ. Ուստարում 4-րդբ դասարանում սովորում են 30 աշակերտ, որից 22-ը աղջիկներ են , 8-ը տղաներ:Դասարանում տիրում է ընկերական մթնոլորտ,բոլորն էլ կարևորում են միասնականությունը:Դասարանում ունենք առաջադիմություն ցուցաբերող աշակերտներ,սակայն կան նաև չհասցնող երեխաներ:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

Դաստիրակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչն է: Լիարժեք արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին, բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին: Այդ ամենը լավ պատկերացնելու համար , ավելի նպատակահարմար է ուսման ընթացքում կազմակերպել միջոցառումներ,էքսկուրսիաներ , որոնք խթան կհանդիսանան ուսուցանվող նյութի յուրացմանը:

Հայեցի դաստիարակություն
1. Հոգևոր դաստիարակությունը

Երեխաներին հնարավորություն տալ ծանոթանալու իրենց հոգևոր և կրոնական ժառանգությանը՝
կազմակերպելով ինտերակտիվ հոգևոր զրույցներ , աստվածաշնչյան ուսումնասիրություններ և թատերական ներկայացումներ:

2.Գեղագիտականդաստիարակությունը

Աշակերտնորին սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնոլու հոգևոր , մշակութային հարստություն,բարություն, սրտացավություն և դրա հիման վրա երեխայի մեջ արմատավորել գեղեցիկը:

3.Ռազմահայրենասիրականդաստիարակությունը

Աշակերտների հետ խոսել հայրենիքի մասին, նրա կարևորության:Պետք է սովորեցնել, որ միայն հողն ու ջուրը չէ,որ ունի պաշտպանության կարիք : հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիքի :

4.Ֆիզիկականդաստիարակությունը

Դպրոցականների ֆիզիկական դաստիարակությունը ամբողջ կրթական համակարգում զբաղեցնում է յուրահատուկ տեղ:Երեխաներին խրախուսել ֆիզիկական վարժություններում , ուղղորդել հիգիենայի ճիշտ պահպանումը:

5.Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ամենից առաջ սեր առաջացնել աշխատանքի նկատմանբ:Զրուցել երեխաների հետ, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, աշխատանքն է պարգևում հոգևոր կյանքի ուրախություն:

6.Բնապահպանական դաստիարակություն

Նպատակն է զարգացնել պատասխանատու և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ , որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է :

7.Դպրոց – ընտանիք կապը

Ուսուցիչն ու ծնողները նույն նպատակն են հետապնդում ,նրանց երկուսի ուշադրության կենտրոնն են հանդիսանում աշակերտները: Այդ է պատճառը, որ պետք է պահպանել դպրոց- ծնող- ուսուցիչ սերտ կապը, միմյանց օգնելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական շխատանքների բովանդակությունը	Կատարմանժամկետը	Կատարողներ
I	Ողջույն դպրոց	7.09.2022թ.	
II	Ես Հայաստանի քաղաքացի եմ	14.09.2022թ.	
III	Իմ իրավունքներն ու պարտականությունները	28.09.2022թ.	
IV	Մեր մեծերը	5.10.2022թ	
V	Ինչպես պաշտպանվել համաճարակներից	12.10.2022թ	
VI	Կարողանալ լսել դիմացինին	19.10.2022թ.	
VII	Ինչպես պահպանել հիգիենան	2.11.2022թ.	
VIII	Խնամել կենդանիներին	9.11.2022թ.	
IX	Պահպանել բնությունը	*16.11.2022թ*	
X	*Իմ սիրելի հերոսները*	*23.11.2022թ.*	
XI	*Տարվա եղանակները*	*30.11.2022թ*	
XII	*Բնական աղետներ*	*7.12.2022թ*	
XIII	*Գիրքը մեր բարեկամն է*	*14.12.2022թ.*	
XIV	*Ինչպես վարվել արտակարգ իրավիճակներում*	*21.12.2022թ*	
XV	*Հայկական արմատներ*	*11.01.2023թ.*	
XVI	*Ազգային տոներ*	*18.01.2023թ.*	
XVII	*Ամանորի հրաշքներ*	*25.01.2023թ*	
XVIII	*Հայոց բանակ*	*1.02.2023թ.*	
XIX	*Ես սիրում եմ թատրոնը*	*8.02.2023թ.*	
XX	*Նվիրել,թե ստանալ*	*15.02.2023թ.*	
XXI	*Հայոց բանաստեղծները*	*22.02.2023թ.*	
XXII	*Բույսերն ու կենդանիները*	*1.03.2023թ.*	
XXIII	*Ինչպես լինել քաղաքավարի*	*8.03.2023թ.*	
XXIV	*Իմ ընտանիքը*	*15.03.2023թ.*	
XXV	*Իմ անուշ մայրիկ*	*22.03.2023թ.*	
XXVI	*Ահա եկավ գարունը*	*5.04.2023թ.*	
XXVII	Գրքի դերը	12.04.2023թ.	
XXVIII	Պահպանենք մեր մոլորակը	19.04.2023թ	
XXIX	Ազնվություն և ճշմարտացիություն	26.04.2023թ	
XXX	Իմ հայրենիքը Հայաստանն է	3.05.2023թ.	
XXXI	Շրջակա միջավայրը	10.05.2023թ.	
XXXII	Ես կարող եմ…	17.05.2023թ.	
XXXIII	Պատրաստ լինել հիմնական դպրոցին	24.05.2023թ.	
XXXIV	Ողջույն ամառ		

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

	ազգանուն, անուն, հայրանուն
Նախագահ	Խաչատրյան Գոհար
Անդամներ	1.Հարությունյան Ռոզա 2.Խաչատրյան Մարինե 3.Անդրիասյան Ռոզա